

# ՍՏԵՂՉԱԳՈՐԾ. ԴՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՍԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԹԵՐԱՑՈՒՄՆԵՐԸ

*ՊԱԿԻԹ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ*

Կյանքն իր հետ բերում է բազում խնդիրներ, որոնք լուծում են պահանջում: Շատ դեպքերում այդ լուծումից կախված է ոչ միայն խնդրի պարզաբանումը, այլև հետագա խնդիրներին մեր մոտեցումը: Խնդրի լուծման ընթացքում փոփոխվում է ոչ միայն խնդրային իրավիճակի օբյեկտը, այլև առավելապես սուբյեկտը՝ մարդը: Մեզնից յուրաքանչյուրն էլ ժամանակ առ ժամանակ բախվել է այնպիսի խնդիրների, որոնք անլուծելի են թվացել: Իսկ արդյոք կան անլուծելի խնդիրներ, թե պարզապես մենք չենք կարող գտնել դրանց լուծման ճանապարհները: Ինչո՞ւ ենք մենք նախընտրում քայլել արդեն հայտնաբերված ճանապարհով և քանի դեռ այդ ճանապարհը չի ստեղծվել, մենք չենք ցանկանում այն կառուցել: Բայց չէ՞ որ կան մարդիկ, որոնք համառորեն կառուցում են նորանոր ճանապարհներ: Ովքեր են նրանք՝ «հիմարներ», որոնք չեն ցանկանում գիտակցել տվյալ խնդրի անլուծելիությունը, «բախտախնդիրներ», որոնք չեն կարող ապրել առանց նորույթների, թե պարզապես ստեղծագործող անձնավորություններ, որոնք նախընտրում են ստեղծել իրենցը և օգնել մյուսներին ավելի հեշտ հաղթահարելու բազմաթույթ արգելքներ: Քանի որ այս խնդիրների լուծումը առաջին պլան չեն գալիս դպրոցում, ապա համալսարանական ուսուցանման գործն ավելի է բարդանում: Բարձր կրեատիվ անձնավորություններ անհրաժեշտ են կյանքի տարբեր ոլորտներում, և ստեղծագործող մասնագետների պատրաստման անհրաժեշտությունն էլ ստիպում է զբաղվել կրեատիվության զարգացման օրինաչափությունների ուսումնասիրմամբ:

Իր ետևում ունենալով ուսումնասիրության բազմադարյա պատմություն և հետազոտությունների մեծ շարք ստեղծագործականության տեսությունը տվել է արդեն գնահատելի արդյունք արդի տեխնոլոգիաների, նոր լուծումների որոնման, գովազդային և էքսպերիմենտալ-գյուտարարական աշխարհում: Չնայած այդ ամենին չենք կարող չընդունել, որ ստեղծագործականության դաշտը դեռևս ունի չհերկված և չբացահայտված բազում տարածքներ: Ստեղծագործականությունը հանդես է գալիս գլոբալիտրոնիկի ձևով, որը լուծել անբողջովին դեռևս ոչ ոքի չի հաջողվել:

Տարածայնությունները նույնիսկ հասել են այն աստիճանի, որ ոլորտի երկու մասնագետներ կարող են խոսել նույն երևույթի մասին և միմյանց այդպես էլ չհասկանալ: Ստեղծագործականության դաշտը

տարբեր հայեցակարգերում դիտարկվում է ամենամեղ կոնտեքստից մինչև ամենալայնը: Վերջին շրջանի հետազոտողներն, օրինակ, ստեղծագործական, կրեատիվ համարում են այն գործունեությունը, որը կապված է նորի ստեղծման հետ, միևնույն է կլիմի դա արտաքին աշխարհի իր կամ մտքի և զգացմունքի կառույց, որն ապրում է մարդու մեջ:

Ոլորտում առկա տարբեր տարածայնությունները հանգեցրել են մեկ այլ հետաքրքիր երևույթի. ստեղծագործականությունը սկսել է ուսումնասիրվել տարբեր գիտությունների ներքո՝ ամենատարբեր ենթատեքստերով: Ընդ որում ուսումնասիրությունները կատարվում են ամենապրագմատիկից մինչև ամենատեսականը՝ մեկը մյուսին հիմք չունենալով: Սա ամենայն հավանականությամբ պատճառ է ստեղծագործականության մեկ միասնական կոնցեպցիայի բացակայության:

Ստեղծագործական, կրեատիվ գործունեության օրինաչափությունները ավելի արդյունավետ հասկանալու համար նպատակահարմար է անդրադառնալ վերջինիս տեսությունների զարգացման պատմությանը:

Ստեղծագործական աշխատանքի, նոր մտքի ծննդյան խնդիրները դարեր ի վեր հուզել են բազում գիտնականների և եղել նրանց մտորումների և հետազոտությունների կենտրոնում: Ստեղծագործական աշխատանքը և կրեատիվ մոտեցումը առավելապես կապվել է մտածողության ու երևակայության գործընթացների հետ և ուսումնասիրվել վերջիններիս կոնտեքստում: Առաջ են եկել նաև այնպիսի տեսություններ, ուր կարևորագույն բաղադրիչ են համարվել ստեղծագործողի անձնային առանձնահատկությունները:

Ստեղծագործականության տեսությունները զարգացել են փիլիսոփայության, տրանսբանության, ֆիզիոլոգիայի, հոգեբանության, կիբեռնետիկայի և այլ գիտությունների ներքո:

Կարևորելով տեսությունների զարգացման պատմությունը՝ անդրադառնանք փիլիսոփայության ներքո առաջացած տեսություններին:

Անտիկ ժամանակաշրջանում ստեղծագործականությունը ի հայտ է գալիս երկու ձևով.

ա) ինչպես աստվածային՝ տիեզերքի արարումը,

բ) ինչպես մարդկային՝ արվեստ, գիտություն:

Ստեղծագործականությունը և արարման ընդունակությունը անտիկ ժամանակներում համարվում էր հայեցողության արտահայտություններից: Ամենայն գործունեություն, այդ թվում և ստեղծագործականը, համարվում էր հայեցողությունից ցածր, քանի-որ մարդն արարում է վերջավորը, իսկ ճանաչում հավետը: (2)

Քրիստոնեական ժամանակաշրջանում առաջ եկան ստեղծագործականության հասկացման երկու ուղղություններ.

ա) թեիստական,

բ) պանթեիստական:

Առաջինը ընկալում է աստծուն, ինչպես աշխարհի ստեղծող, որն արարում է ըստ իր կամքի և հայեցողության: Չտաճայում զարգացում կապրի և գիտականորեն կհիմնավորվի Ավգուստինոսի առաջ քաշած այն միտքը, որ ստեղծագործող անձի մոտ կարևոր է կամքը՝ իր դրդապատճառներով և ընտրությամբ: Սրանով իսկ արդեն ստեղծագործականության ուսումնասիրման գործընթացում դրվում են հիմքերը ստեղծագործող անձի անձնային կառուցվածքների ուսումնասիրման ու մեկնաբանման: (2, 6)

Միջնադարում, սակայն, ստեղծագործականության ըմբռնումը անցավ որակական նոր մակարդակի՝ ընկալվելով նախ և առաջ «պատմության ստեղծագործություն»: Գեղարվեստական և գիտական ստեղծագործականությունը հանդես են գալիս ավելի շատ երկրորդական դիրքերում: Մարդն իր արարումներում կարծես միշտ սահմանափակված է աստծու կողմից, և դրա համար էլ միջնադարը չունեցավ այն ստեղծագործական պաթոսը, որով ներծծված է Վերածնունդը: Վերածննդյան ժամանակաշրջանում առաջ է գալիս հետաքրքրություն ստեղծագործական գործընթացի և ստեղծագործող անձնավորության հանդեպ: (6)

18-րդ դարում ստեղծագործականության վերջնական հայեցակարգը ստեղծում է Կանտը, որը հատուկ այն վերլուծում է «երևակայության արդյունավետ ընդունակություն» անվան տակ: Վերջինս, ըստ Կանտի, կապող օղակն է զգայական տպավորությունների բազմազանության և բանական հասկացությունների միասնականության: Այս տեսությունը զարգացում է ունենում Շելլինգի մոտ, որն ընկալում է ստեղծագործական գործունեությունը որպես գիտակցական և անգիտակցական աշխատանքի միասնականություն: (3, 6)

Ռուդոլֆ Շտայներն իր «Ազատության փիլիսոփայությունում» քննարկում է մտածողության և ռեֆլեկսիվ մտածողության երևույթները՝ անդրադառնալով նաև ստեղծագործականության և հայեցողության հակադրություններին. «Երկու բան անհամատեղելի է. գործուն ստեղծարարությունը և հայեցողական հակադրումը: Դա գիտի արդեն Գիրք Ծննդոցը: Աշխարհարարման առաջին վեց օրում Աստված ստեղծում է աշխարհը, և միայն, երբ աշխարհն արդեն կա, կա նաև այն հայելու հնարավորությունը: Այդպես է նաև մեր մտածողության դեպքում: Սա նախ պետք է առկա լինի, եթե ուզում ենք այն դիտարկել»: Փառտորեն այս պնդմամբ Շտայները ավելի առաջնային դերակատարում է տալիս ստեղծագործականությանը՝ դրանով իսկ հակադրվելով անտիկ մտածելակերպին: (1)

Ստեղծագործականության տեսության փիլիսոփայական ասպեկտը 19-րդ և 20-րդ դարերում իր զարգացումն ունեցավ էկզիստենցիալիզմի, պրագմատիզմի, ֆեյնոմենոլոգիայի և այլ դպրոցների

ներքո: Ստեղծագործականության տեսությունների կոնտեքստում ավելանում են ինտելեկտուալ կառույցների քննարկումը, ինովացիա, ոչ շաբլոն մտածողություն, բազում այլ հասկացություններ և վերջապես կրեատիվությունը: Այսպիսին էին այն մոտեցումները ստեղծագործական գործընթացին, որոնք առաջ եկան մինչև 20-րդ դարը փիլիսոփայական գիտության ներքո: Հետագայում բազում հոգեբան-հետազոտողներ որպես տեսական հիմք որդեգրեցին այս դրույթներից շատերը, որոնք էլ հանդիսացան ելման կետ իրենց հետազոտությունների ծավալման համար:

Ստեղծագործական գործընթացը և կրեատիվության օրինաչափությունները լայն թափով սկսվեցին ուսումնասիրվել հոգեբանների կողմից, ստեղծագործականությունը «հոգեբանականացավ»՝ ստանալով բազմաթիվ դիմակներ՝ ոչ շաբլոն մտածողություն, իննովացիա և վերջապես՝ կրեատիվություն: Եթե փորձենք պայմանականորեն խմբավորել, ապա բոլոր առաջացած տեսությունները քննարկում են 4 հիմնական ասպեկտներ՝ կրեատիվ գործընթացը, կրեատիվ արդյունքը, ստեղծագործող անձը և կրեատիվ միջավայրը: Հաճախ այս մոտեցումները օգտագործվում են միասին:

Առաջինը Ուոլլեսն էր, որը բաժանեց ստեղծագործական գործընթացը 4 փուլերի՝ *Նախապատրաստում, ինկուբացիա, արտահայտում, ճշմարտացիության ստուգում*: Սա ոչ միայն պատահական բաժանում է, այլ շրաջադարձային պահ կրեատիվության տեսության զարգացման համար: Ուոլլեսը սրանով նշեց և ցույց տվեց, որ ստեղծագործական լուծումները ոչ թե պատահաբար կամ ինչ-որ անորոշ ուժի կողմից են թելադրվում, այլ ունեն իրենց զարգացման սկզբունքներն ու օրինաչափությունները: Բախվելով խնդրային իրավիճակի հետ և հստակ ձևակերպելով խնդիրը, անհրաժեշտություն ենք զգում խնդրին վերաբերվող ինֆորմացիայի և զբաղվում ենք դրա հավաքագրմամբ, վերջինս ծառայում է որպես անհրաժեշտ ինֆորմացիոն ֆոն լուծում պահանջող աշխատանքի համար (I փուլ), վերանշակում ենք տվյալ ինֆորմացիան. արտաքննապես այն թվում է հանգստի ժամանակաշրջան, սակայն ուղեղն անդադար աշխատանքի և լուծման որոնման մեջ է (II փուլ), տեղի է ունենում գաղափարի արտահայտում կամ ինչպես անվանում ենք «ինսայթ», այս փուլը հաճախ բնութագրվում է որպես ներշնչում: Հետազոտողները կարծում են, որ փայլատակումը հենց այն պահն է, երբ լուծումը ենթագիտակցությունից անցնում է գիտակցական մակարդակ (III փուլ), է վերջում տեղի է ունենում առաջադրված գաղափարի ճշգրտում և նրա գործնական կիրառության սահմանների որոշում: Սա կարող ենք անվանել ներմուծման կամ «վերիֆիկացիայի» փուլ (IV փուլ):

Ամենաքիչը ուսումնասիրված են և հետաքրքրության առարկա են հանդիսանում II և III փուլերը, քանի որ դրանք հոսում են անկատ ձևով: Բազմաթիվ դեպքերում ստեղծագործական աշխատանքով զբաղված անձնավորությունները, չհասկանալով II փուլի կարևորությունը, այն պարզապես ժամանակի կորուստ են համարում: Եվ հետազոտողների մոտ կարելի է հանդիպել այն մտքին, որ գիտական հայտնագործությունը հանդիսանում է ստեղծագործական գործունեության կուլիմնացիոն կետը: Այն հոսում է որպես կտրուկ և արագ անցում չիմացությունից իմացություն: (4)

Չեղիմակներից մեկը կարծիք է հայտնում, որ «ինկուբացիան» (II փուլ) տեղի է ունենում կոնսուլիդացիայի միջոցով, որը թույլ է տալիս խնդրի էլենենտների և երկարատև հիշողության մեջ պարունակվող անհրաժեշտ ինֆորմացիայի միջև կապերի հաստատմանը: Դրանով իսկ կարևորվում է ինտուիտիվ «փայլատակման» և ռեմինիսցենցիայի համեմատական ուսումնասիրությունը՝ որպես ստեղծագործականության հոգեբանության արդիական հարցերից մեկը:

Արանք են ստեղծագործականության ուսումնասիման այն հիմնական ուղղությունները, որոնք առաջացել են փիլիսոփայական, հոգեբանական, ինչպես նաև բնագիտական այլ գիտությունների ներքո: Արդյունքում նշենք հոգեբանական ուսումնասիրությունների արդյունքում ստեղծագործականության վերաբերյալ առաջ քաշված հիմնական ընդհանրացումները.

ա) Կրեատիվությունը նոր մոտեցումների և արդյունքների անհրաժեշտությանը ադապտիվ ազդեցության ընդունակությունն է: Այս ընդունակությունը թույլ է տալիս նաև գիտակցել նորը կենցաղում, չնայած որ ինքնին գործընթացը կարող է կրել ինչպես գիտակցված, այնպես էլ անգիտակցական բնույթ:

բ) Նոր ստեղծագործական արդյունքի ստեղծումը առավելապես կախված է ստեղծողի անձից, նրա ներքին դրդապատճառայնության ուժից: Սակայն կարծիքներն այն մասին, թե ինչ ազդեցություն են թողնում անձնային առանձնահատկությունները ստեղծագործականության վրա խիստ տարբերվում են:

գ) Կրեատիվ գործընթացի, արդյունքի և անձի առանձնահատկություններն են յուրահատկությունը, կայունությունը, վալիդությունը, ադեկվատությունը և պիտանելիությունը:

դ) Կրեատիվ արդյունքները կարող են իրենց բնույթով շատ տարբեր լինել՝ մաթեմատիկական նոր խնդրի լուծում, նկարներ կամ պոեմներ, սոցիալական և կենսական խնդիրների նոր լուծումներ, նոր տեսություններ և այլն... (3, 4, 6)

Ժամանակակից հետազոտությունները նվիրված լինելով ստեղծագործական աշխատանքի արդյունավետ կազմակերպմանը, նոր մտքերի ստացմանը, «արհեստական ինտելեկտի» հիմնախնդիրների պարզաբանմանը՝ ուղղված են հիմնականում հետևյալ ուղղություններով.

- ✓ Որոշման ընդունման մեխանիզմների և կառուցվածքների ուսումնասիրմանը: Կարելի է ասել, որ այս ուղղությամբ աշխատանքները շարունակվում են և հայտնաբերված օրինաչափությունները ճշգրտվում:
- ✓ Մեկ այլ հետաքրքիր ուղղություն է հոգեկան գործընթացների ֆորմալիզացիայի ճանապարհների և հնարավորությունների ուսումնասիրումը:
- ✓ Նոր և լայն տարածում գտած ուղղություն է տարբեր ֆիրմաներում և կազմակերպություններում ստեղծագործական լուծումներ առաջարկող խմբերի կազմման օրինաչափությունների ուսումնասիրումը և դրանց կիրառումը պրակտիկայում:
- ✓ Ստեղծագործական աշխատանքի նոր մեթոդների մշակման և արդյունաբերության մեջ դրանց կիրառման ճանապարհների ուսումնասիրումը: (3, 6)

Առաջին ուղղությամբ տարվող աշխատանքների նվաճումներից կարող ենք համարել այն, որ վերջին տարիներին մտածողության գործընթացին առաջացել են լիովին նոր մոտեցումներ, որոնք առաջարկում են ստեղծագործական աշխատանքում օգտագործել մտածողության մի որոշակի տիպի օրինաչափությունները: Վերջերս, օրինակ, առաջարկվել են մտածողության այնպիսի տիպեր, ինչպիսիք են սուկցեսիվ, ինվերսիոն, առաջընթացի, ամբողջական սպեկտորի մտածողությունները և այլն: Սակայն չպետք է կարծել, թե առաջիկա տարիներում չեն հայտնաբերվի մտածողության նոր տիպեր և օրինաչափություններ, որոնք կօգնեն ավելի արդյունավետ մոտենալ խնդրի լուծման և որոշման ընդունման խնդիրներին:

«Արհեստական ինտելեկտի» ստեղծման և հոգեկան գործընթացների ֆորմալիզացիայի խնդիրների պարզաբանման հիմնական հարցադրումն է, թե կարող է արդյոք «Ա. Ի.»-ն ունենալ որակապես նոր դրոպապատճառայնություն, հուզական կարգավորում, Օպառակադրում: Այս ուղղությամբ հետազոտությունները շարունակվում են լայն թափով կիրառական մաթեմատիկայի, կիբեռնետիկայի և հոգեբանության խաչմերուկներում:

Կարելի է նշել, որ կրեատիվ աշխատախմբեր արդեն գործում են այնպիսի համաաշխարհային կազմակերպություններում, ինչպիսիք են Fairchild Semiconductor (Intel միկրոսխեմաների արտադրություն).

Hullett-Packard, Ford, IBM, Xerox, Mitsubisihi, Toshiba, Toyota և այլն: Այս կազմակերպություններում կրեատիվությունն առաջինը խառնում են «ուղեղային գրոհի», «ТРИЗ» (Գյուտարարական խնդիրների լուծման տեսություն) և այլ մեթոդներով, որոնք մշակվում և կիրառության մեջ են մտնում համարյա ամեն ամիս:(5)

Գիտական հայտնագործության ստեղծումը արդի հասարակությունում անցնում է հետևյալ փուլերը.

- ✓ Չեղինակային փուլ . բազային գաղափարների, սկզբունքների ստեղծում: Այսօր այս փուլն ավելի է բարդանում, քանի որ արդեն կան մի շարք հաստատուն և ճշգրտված մեթոդիկաներ և ստեղծագործական էլիտայի տեղերն արդեն զբաղված են:
- ✓ Հաղորդչային փուլ, երբ հեղինակը բազային գաղափարները ներմուծում է միջավայր: Այդ հիմնականում իրականացվում է թրեյնինգների և սեմինարների միջոցով: Այս փուլում գտնվում են հետագա մշակմամբ հետաքրքրված անձինք, գտնվում են հետազոտությունների և գովազդի համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները: Ավելի ակտիվ մասնակիցները ստեղծում են լիցենզավորված մարզիչների խմբեր:
- ✓ Ինստիտուցիոնալ փուլ, այս փուլում մասնագետները ստեղծում են կազմակերպություններ, որոնց աշխատանքային նպատակն է խնդիրների լուծումը(problem solving): Ստեղծվում է ինտերնետային համապատասխան էջ, ուր ավելի հեշտ է արտացոլել ձեռքբերումները և այն ոլորտները, որոնց խնդիրների լուծումների ստացումը հանձն է առնում կազմակերպությունը: (5)

Այս մշակված համակարգը հիմնադրվել է Է. դե Բոնոյի կողմից և մինչ օրս կիրառվում է արևմուտքում: Ցավոք ՌԳ-ում գիտական հետազոտությունների ընթացքը այս բնույթը չի կրում, որն էլ պատճառ է հանդիսանում այն բանի, որ ուսումնասիրություններ են կատարվում օրինակ այն ոլորտում, որում ժամանակակից հասարակությունը հետաքրքրված չէ:

Այժմ Internet կապի միջոցով է իրականացվում «ուղեղային գրոհը», քանի որ ավելի հեշտանում է խնդրի շուրջ աշխարհի տարբեր ժայռերից հավաքել հետաքրքրվողների: Ռուսաստանում մշակված գյուտարարական խնդիրների լուծման տեսության (ТРИЗ): հիմնադրույթն այն է, որ ցանկացած գյուտարարական խնդիր ներկայացնում է նոր պահանջների և հին համակարգի կոնֆլիկտ: «ТРИЗ» մեթոդիկան 1996-ից հայտնվեց Internet-ի էջերում, որից հետո ԱՄՆ-ում ստեղծվեց համապատասխան ինստիտուտ և հրավիրվեցին մասնագետներ: Այժմ այս մեթոդն օգտագործվում է Ford, Kodak, և

Proctor&Gamble ընկերություններում և թույլ է տալիս բարձրացնել մտքերի գեներացիայի արդյունավետությունը 70-300%-ով: (5)

Այսպիսով կարող ենք եզրակացնել, որ արտասահմանում ստեղծագործականության հետազոտություններն կրում են կիրառական-ուտիլիտար բնույթ: Վերջինս ապահովում է ֆինանսական և նյութական ռեսուրսներ և սա էլ արդյունքում թույլ է տալիս համակարգչային տեխնոլոգիաների ներգրավվմանը և լայնացնում բազային հայեցակետերի ազդեցության ոլորտը հասարակության մեջ:

Ստեղծագործականության առաջին տեսությունը առաջ է եկել հավանական է դեռևս մախնադարյան ժամանակաշրջանում, երբ մարդը փորձեց բացատրել, թե ինչու է ինքը հակված ստեղծելու ինչ-որ «նոր գործիք», իր գործունեությունը առավել արդյունավետ դարձնելու համար և տեսությունների հետագա զարգացումը իրեն չի սպառել նոր տեխնոլոգիաների արդի ժամանակաշրջանում, ուր դարձել է էլ ավելի կիրառական և պրագմատիկ և համոզված ենք իր զարգացումը կապրի դեռևս բազում դարեր՝ ձգտելով մեկ միասնական հայեցակարգի, որը կլինի իսկապես ստեղծագործական մտքի բազմադարյա աշխատանքի ծնունդ:

## РЕЗЮМЕ

В данной статье обсуждаются общие проблемы креативности: начиная с древних времен до наших дней. Предлагаются основные психологические теории креативности и также делается обзор современных проблем креативного процесса.

## ԳՐԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Շտայներ Ռ. Ազատության փիլիսոփայություն Երևան 1998
2. Асмус В. Ф. Проблема интуиции в философии и математике Москва 1963
3. Надлер Дж., Хибино М., Фаррелл Дж. Мышление полного спектора Минск 2001
4. Научное творчество под. ред. Мыклинского С.Р. Москва 1969
5. <http://psysamara.ru>
6. <http://www.superidea.ru/tm/book/fptliter.htm>